# Կիսվի՛ր և քարոզարշավ

Կանանց միջազգային օրվա 100-ամյակը «ՕՔՍՖԱՄ»-ն իր գործընկերների հետ նշում է հանուն հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քարոզարշավով

էջ 3

## Հատուկ թողարկում 2011

«Հուսալի ձեռքեր» խմբի անդամները

# Հավասար հնարավորությունները «Հուսալի ձեռքեր»-ում են

**Վարսեր Զաքարյանը Իջևան քաղաքի «Հուսալի ձեռքեր» խմբի երիտասարդ ակտիվիստներից է: Սովորում է 11-րդ դասարանում և ընկերների հետ արդեն երեք տարի է՝ բազմաթիվ նախաձեռնություններով է հանդես գալիս: Վարսերի հետ ծանոթացանք անցյալ տարվա աշնանը Իջևանում՝ մասնակցելով «Միանանք հանուն հավասար հնարավորությունների» ակցիային, որ նրանք կազմակերպել էին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միամսյակի շրջանակներում:**

*- Ամեն ինչ սկսվեց բանավեճի ակումբից, որ ունեինք «Հույսի կամուրջ» ՀԿ կենտրոնում: Հետո երիտասարդ առաջնորդների խումբն ավելի ակտիվացավ, և այնքան էինք ոգևորվել, որ հատուկ անուն որոշեցինք մեր խմբի համար՝ «Հուսալի ձեռքեր»: Ստեղծեցինք մեր լոգոն, օրիներգ էլ ունենք,-* պատմում է Վարսերը՝ բաժանելով ակցիայի նշանաբան՝ գունավոր թղթե ձեռքերը, որոնց վրա մասնակիցներն իրենց տվյալներն էին գրում և փակցնում պաստառի վրա: Ի դեպ, ակցիայի համար պատրաստված 2000 «ձեռքերն» արդեն սպառվել էին, իսկ մարդիկ գալիս ու գալիս էին՝ իրենց զորակցությունը հայտնելով սովորական գունավոր թերթիկների վրա:

*- Մինչ այդ շատ կաշկանդված էի, բարդույթներ ունեի, իսկ հիմա «Հուսալի ձեռքեր»-ում ավելի վստահ և համարձակ եմ դարձել, նոր գիտելիքներ եմ ստացել, գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները և եթե նկատում եմ, որ ոտնահարում են ուրիշի իրավունքները, անմիջապես միջամտում եմ: Բոլորն էլ ունեն նույն իրավունքները, բայց ոչ բոլորն են գիտակցում, որ կարելի է դրանցից օգտվել: Եվ հնարավորություններն էլ հաճախ չեն նկատում: Մենք փորձում ենք հույս ներշնչել մարդկանց, որ նրանք այդ հնարավորությունները տեսնեն,-* ասաց մեզ Վարսերը:

Խմբի մեկ այլ անդամ՝ Հրաչը, որն ակցիայի մասնակիցներին տեղեկատվական թերթիկներ էր բաժանում, ասաց. *«Մեր հանրապետությունում կա 179.257 հաշմանդամություն ունեցող մարդ, որի 4,7%-ը կազմում են մինչև 18 տարեկան երեխաները: Մեր նպատակն էր իրազեկել մարդկանց այս խնդրի մասին, համախմբել նրանց հավասարության գաղափարի շուրջ, ապացուցել, որ իրականում հաշմանդամություն ունեցող մարդկանց հարմար միջավայրը հարմար է բոլորին»:*

Նրա խոսքով՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ էլ կարող են լիարժեք մասնակցություն ունենալ հասարակության կյանքին, եթե համապատասխան պայմաններ և հավասար հնարավորություններ լինեն: *«Մենք էլ կոչ ենք անում բոլորին նպաստել այդ հնարավորությունների ստեղծմանը»,-* ավելացրեց նա:

«Հուսալի ձեռքեր»՝ երիտասարդ առաջնորդների շահերի պաշտպանության խումբը ձևավորվել է Իջևանում, 2009-ին՝ «Դարձնել կանանց ձայնը լսելի» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է խթանել կանանց դերն ու մասնակցությունը համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացում: Ծրագիրն իրականացնում է «Հույսի կամուրջ» ՀԿ-ն՝ «ՕՔՍՖԱՄ»-ի աջակցությամբ:

«Հույսի կամուրջի» Իջևանի մասնաճյուղի տնօրեն Արմինե Ներսիսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ այս ծրագիրն իրենց ամենահաջողված նախաձեռնություններից է: Իսկ «Հուսալի ձեռքեր» խմբի անդամներն իսկապես շատ ակտիվ են, համայնքում բոլորը գիտեն նրանց մասին: *«Երեխաներն իրոք պատրաստված են և իրենց որպես պատասխանատու քաղաքացի են դրսևորում: Յուրաքանչյուր խնդրի շատ արագ են արձագանքում: Վերջերս ունեցանք ևս մի ձեռքբերում: Համայնքում կար մի շատ խոցելի ընտանիք, որն ուներ երեք անչափահաս երեխա և ապրում էր հինգհարկանի շենքի վերջին հարկում: Շարունակ տանիքի հետ կապված խնդիրներ ունեին, մեր երիտասարդները հատուկ նամակով դիմեցին քաղաքապետին, և, հուրախություն բոլորիս, հարցը լուծվեց»,-* պատմեց նա:

Ի դեպ, կանանց և երիտասարդների շահերի պաշտպանության խմբեր են գործում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի երեխայի զարգացման կենտրոններում՝ Դիլիջանում, Նոյեմբերյանում, Բերդում, նաև Երևանում:

**Լիլիթ Քոչինյան**

*Շարունակությունը՝ էջ 2-ում*

## Փաստաշար

### Մարտի 8-ը բոլորեց իր 100-ամյակը

Այս տարի ողջ աշխարհում նշվելու է Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի 100-ամյակը: Այդ կապակցությամբ մի շարք միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, որոնց թվում են «ՕՔՍՖԱՄ»-ը, «Միջազգային համաներումը», «Փրկեք երեխաներին»-ը, «Սպիտակ ժապավենը», «Հանուն անվտանգ մայրության» և ուրիշներ, կազմելով «Հավասարները» կոալիցիան, քարոզարշավ են սկսել հայտնի երգչուհի Էննի Լենոքսի գլխավորությամբ: Քարոզարշավի նպատակն է ուշադրություն հրավիրել կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդրին:

### «ՕՔՍՖԱՄ ՄԲ»՝ աղքատությունը հնարավոր է հաղթահարել

Հայաստանում 1,1 մլն մարդ աղքատ է: Ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալներով՝ մեր երկրի յուրաքանչյուր երրորդ բնակիչ (կամ բնակչության 34,1%-ը) աղքատ է: Սակայն փոփոխությունները հնարավոր են: «Մենք համոզված ենք, որ աղքատությունն ավարտուն փաստ չէ, այլ կենսական անարդարություն, որը հնարավոր է հաղթահարել»՝ այս կարգախոսով է աշխատում աշխարհի ավելի քան 120 երկրներում, այդ թվում Հայաստանում, «ՕՔՍՖԱՄ ՄԲ» միջազգային բարեգործական կազմակերպությունը: «ՕՔՍՖԱՄ»-ը Մեծ Բրիտանիայում հիմնված մարդկանց համաշխարհային շարժում է, որի նպատակն է կառուցել ավելի արդար և ապահով աշխարհ, առանց մարդկային տառապանքի և աղքատության:

### Կանայք մեր ծրագրերի սիրտն ու հոգին են

Այսպես է բնորոշում «ՕՔՍՖԱՄ ՄԲ»-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը կանանց մասնակցությունը իրենց ծրագրերում: Կազմակերպության բոլոր ծրագրերը մշակվում և իրականացվում են այնպես, որ ապահովվի կանանց և համայնքի խոցելի խմբերի ներգրավվածությունը, և նրանք առավել մեծ դեր խաղան իրենց կյանքին վերաբերող որոշումների կայացմանը:

## «ՕՔՍՖԱՄ ՄԲ-Հայաստան»

**170 հազար ուղղակի և 700 հազար անուղղակի շահառուներ Հայաստանում**

Արդեն 16 տարի է, սկսած 1994 թվականից՝ «ՕՔՍՖԱՄ ՄԲ» հայաստանյան մասնաճյուղը իրականացնում է մեր երկրում աղքատության կրճատման և մարդկային տառապանքի վերացման իր առաքելությունը: Այս տարիների ընթացքում նա աջակցություն է տրամադրել 170 հազար ուղղակի և 700 հազար անուղղակի շահառուների:

Ներկայումս «ՕՔՍՖԱՄ ՄԲ -Հայաստանը», համագործակցելով տեղական հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի և մարզային իշխանությունների հետ, հանրապետության 6 մարզերի ավելի քան 165 գյուղական հեռավոր և սահմանամերձ համայնքներում իրականացնում է հետևյալ ծրագրերը.

- «Հայաստանի սահմանամերձ մարզերում համայնքային առողջության առաջնային պահպանումը»,
- «Կանանց դերը և ձայնը կառավարման գործընթացում»,
- «Համայնքի ձայնը որոշումների կայացման գործընթացում. կարողությունների և հանձնառությունների հզորացում»,
- «Հայաստանի գյուղական համայնքների կայուն կենսապահովում»,
- «Համայնքներում աղետների ռիսկերի նվազեցում» և այլն:

## Բարության տոհմածառը

### «Բարության դասեր»

Այդպիսի դաս «Հուսալի ձեռքեր» խմբի անդամ Անի Պարոնյանը և Լիդա Մովսեսյանը հաջողությամբ վարեցին Իջևանի թիվ 3 ներառական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների համար: Իսկ Ծաղկավանի դպրոցում նրանց անակնկալ էր սպասում:

*«Նրանք ընդամենը երկու օր առաջ էին տեղեկացել «բարության դասի» անցկացման մասին և այս կարճ ժամանակում ուղղակի հրաշքներ էին գործել. ներկայացրել էին «Բարի սամարացի» բեմականացումը, նկարել գեղեցիկ, լուսավոր, բարի պաստառներ, պատրաստել «Բարի» բառի տոհմածառը, հավաքել բարության թեմայով ասույթներ: Հիացած էինք»,-* պատմեց Անի Պարոնյանը:

Իսկ բոլորովին վերջերս, փետրվարի 17-ին՝ Բարության միջազգային օրվա արթիվ, խմբի անդամները յուրահատուկ ակցիա կազմակերպեցին Իջևանում, Դիլիջանում, Բերդում և Նոյեմբերյանում՝ իրենց համաքաղաքացիներին բաժանելով «բարու ծառի» սերմեր-սրտիկները:

### Սիրում եմ աշունը, տերևաթափը...

«Հուսալի ձեռքեր» խմբի մեկ այլ անդամ՝ Սերոբը, մեզ պատմեց, թե ինչպես «Հանուն հավասար հնարավորությունների» ակցիայի շրջանակներում հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների հետ միասին այցելեցին Իջևանի բուսաբանական այգի: *«Շատ հետաքրքիր էր բնության գրկում, միասին զբոսնում էինք, քայլում տերևաշատ ծառուղիներով, ոմանք աշնան տերևներ էին հավաքում, ոմանք էլ նկարում և ասեղնագործում էին...»*

### Ծառատունկ՝ միասին

Իջևանի զբոսայգում ծառատունկ էր: Ծառատունկը կազմակերպել էր Իջևանի քաղաքապետարանը՝ «Հուսալի ձեռքեր» խմբի երեխաների խնդրանքով: *«Արդեն երկրորդ տարին է, որ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաներս միասին ծառատունկ ենք կատարում, գեղեցկացնում մեր քաղաքը»,-* պատմում է «Հուսալի ձեռքեր» խմբի անդամ Նարինե Թադևոսյանը:

Ի դեպ, ակցիայի մասնակիցների ջանքերով զբոսայգին հարստացավ 100 եղևնիներով:

### Կրկնակի խտրականություն

*«Հաշմանդամություն ունեցող կանայք հանդիսանում են կրկնակի և զուգահեռ խտրականության թիրախ. մի կողմից՝ գենդերային խտրականության, մյուս կողմից՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ ցուցաբերվող խտրական վերաբերմունքի»,-* ասում են «Խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ» թեմայով թրենինգ վարողները՝ «Հուսալի ձեռքեր» խմբի անդամներ Տաթև Սինասյանը, Լիդա Մովսեսյանը և Անի Պարոնյանը:

*«Մենք բազմիցս բանավիճել ենք այս թեմայով, այն քննարկել ենք նաև «Երիտասարդ սերնդի ձայնը» առաջին երիտասարդական հավաքի ժամանակ: Այս թրենինգի միջոցով մենք համակարգված մոտեցում ցուցաբերեցինք առկա խնդիրներին, հաջորդ հանդիպման ժամանակ կներկայացնենք այդ խնդիրների լուծման առաջարկությունները»,-* պատմեց Տաթև Սինասյանը:

*Լուսանկարները՝ Արփինե Խաչատրյանի, Լիդա Մովսեսյանի*

## Համայնքի ձայնը

### Օրենքն ասում է՝ մարդիկ իրավունքներ ունեն... մարդիկ ասում են՝ ունե՞նք որ...

**Շիրակի մարզի հասարակական կազմակերպությունների միության (ՇՀԿՄ) անդամները իրենց պարտքն են համարում ապացուցել մարդկանց, որ նման հարցադրումը սխալ է: Ընդ որում, ոչ միայն բացատրում, այլև իրական օգնություն են ցույց տալիս իրենց շահառուների իրավունքները վերականգնելու հարցում: Միությունը «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկերն է և նրա աջակցությամբ մի շարք ծրագրեր է իրականացնում մարզի գյուղական համայնքներում:**

*«Շիրակի մարզի բնակիչների մեծ մասն ապրելով սոցիալական ծանր պայմաններում և միաժամանակ անտեղյակ լինելով օրենքներից՝ հաճախ չի կարողանում պաշտպանել իրենց իրավունքները, մենք փորձում ենք լրացնել այդ բացը: Աջակցում ենք նաև այն գյուղացիներին, ովքեր դժվարանում են տարբեր ծառայություններից օգտվելու համար քաղաք հասնել, տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրում վարկային ծրագրերի վերաբերյալ, ջրամատակարարման պարտքերի մարման հարցում օգնություն ցուցաբերում»,-* պատմում է ՇՀԿՄ նախագահ Մկրտիչ Ճարտարյանը:

Ի դեպ, նրա խոսքով՝ միության օգնությանը դիմողների գերակշիռ մասը կանայք են: Դա պայմանավորված է նրանով, որ գյուղերի տղամարդիկ մեծ մասամբ բացակայում են հանրապետությունից, և հիմնական հոգսը ծանրացած է կանանց ուսերին: Միության իրավաբանը հաճախ դատավեճերին ստանձնում է գյուղաբնակ կանանց փաստաբանի պարտականությունը, իսկ անհրաժեշտության դեպքում միությունը հոգում է նաև դատական ծախսերը:

ՇՀԿՄ-ն իր գործունեությունը սկսել է նախ չորս համայնքում, որոնց թիվը տարեցտարի ավելանալով՝ հասել է 15-ի: «ՕՔՍՖԱՄ»-ի աջակցությամբ շատ համայնքներում ստեղծվել են քաղաքացիական կենտրոններ, որոնք տրամադրում են անվճար իրավաբանական խորհրդատվություն, կազմակերպում են դասընթացներ և սեմինարներ ժողովրդավարական մասնակցային ձևերի և դրանց արդյունավետ կիրառման վերաբերյալ: Մի խոսքով, սովորեցնում են մարդկանց՝ ինչպես լսելի դարձնել համայնքի ձայնը: Եվ ահա այստեղ է, որ առավել ակտիվություն են ցուցաբերում կանայք: Ծրագրի շրջանակներում գործող համայնքային ինքնօգնության և առաջնորդ կանանց ակտիվ խմբերը համագործակցում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ պարբերաբար ներկայացնելով համայնքներում առկա խնդիրների լուծման առաջարկություններ:

Ավելին, այդ խմբերում ներգրավված առավել ակտիվ կանայք փորձում են անել նաև հաջորդ քայլը և առաջադրել իրենց թեկնածությունը ՏԻՄ ընտրությունների ժամանակ:

«Արդյունքում այսօր ունենք 8 կին, ովքեր ձգտում են դառնալ ավագանի: Սա մեր բոլորիս ջանքերի արդյունքն է»,- ասում է ՇՀԿՄ հոգեբան Գայանե Գևորգյանը:

Դրա հետ մեկտեղ ավանդական մտածելակերպը դեռ գերիշխում է: Օրինակ՝ Ամասիայի բնակչուհիներից մեկը առաջադրվել էր համայնքապետի նախորդ ընտրություններում, բայց ամուսնու պահանջով, քանի որ գործող գյուղապետը եղել է նրա ընկերը, հանել էր թեկնածությունը,- պատմեցին մեզ ՇՀԿՄ-ում:

Քաղաքացիական կենտրոնները հույսի և հավատի յուրահատուկ կղզյակներ են դառնում: Այդ կարծիքի են այստեղ հաճախող բոլոր մարդիկ, ովքեր միշտ կարող են ստանալ ՇՀԿՄ-ի մասնագետների խորհրդատվությունը, այդ թվում՝ առցանց եղանակով: Կենտրոնները լավ կահավորված են գույքով, համապատասխան համակարգչային տեխնիկայով, իսկ ինտերնետին միանալու դեպքում արտաքին աշխարհի հետ շփվելու լայն հնարավորություններ են ստեղծում հեռավոր գյուղերի բնակիչների համար:

Մարդիկ էլ ոգևորվելով՝ նորանոր խնդիրներ են առաջ քաշում, սկսում են մտածել իրենց կյանքը բարելավելու ուղղությամբ, ասենք՝ գյուղում գեղեցկության սրահ ունենալու, երեխաների համար խաղահրապարակ կառուցելու կամ ինչու ոչ՝ վաղուց չաշխատող շատրվանները վերանորոգելու մասին: Եվ այս ամենն այն դեպքում, երբ թվում էր, թե աղքատության ճիրաններում հայտնված մարդիկ կորցրել են երազելու ունակությունը...

**Արշակ Ադամյան**

## Հաջողության բանաձևը

### «Կինը ցանկացած պաշտոնում ավելի լավ կարող է աշխատել, քան տղամարդը»

**- համոզված է Վարդիթեր Գասպարյանը, ով ղեկավարում է Շիրակի մարզի Ախուրիկ համայնքը: Ծնունդով Ախուրիկից է, ընդամենը 1,5 տարի է՝ ինչ համայնքապետ է ընտրվել, բայց մինչ այդ ղեկավար աշխատանքի նշանակալի փորձ ուներ: Ժամանակին եղել է կաթի գործարանի գլխավոր ինժեներ, Ախուրիկ սովխոզի տնօրեն, Ախուրյանի գործկոմի քարտուղար... Ընտրություններից առաջ աշխատում էր Շիրակի մարզպետարանում՝ որպես գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ: Ակտիվ համագործակցում է «ՕՔՍՖԱՄ»-ի համայնքային ծրագրերի հետ Շիրակի մարզում: Ի դեպ, Ախուրիկում, որտեղ մինչև վերջերս համակարգիչը շքեղություն էր համարվում, հաջողությամբ գործում է տեխնիկապես հագեցած քաղաքացիական կենտրոնը:**

**- Դժվարությա՞մբ հաղթեցիք ընտրություններում:**

- Չէի ասի, թե հեշտ էր: Եվս երկու թեկնածուներ կային: Այնուամենայնիվ կարողացա հաղթել:

**- Ասում են՝ ոչ նախանձելի «ժառանգություն» եք ստացել:**

- Ախուրիկ համայնքը ֆինանսական ծանր վիճակում էր, ընտրություններից առաջ խոստացել էի մարդկանց, որ դուրս կբերեմ համայնքն այդ վիճակից: Ընդամենը 1,5 տարվա ընթացքում կարողացա ոչ միայն մարել բոլոր պարտքերը, այլև անցյալ տարվա մի շարք ցուցանիշներով մարզում ճանաչվեցինք լավագույնը, թեկուզև հարկերի, վարձավճարների մուծման և աշխատավարձերը ժամանակին տալու առումով:

**- Ուրիշ ի՞նչ բարեփոխումներ են կատարվել Ախուրիկում Ձեր ղեկավարության օրոք:**

- Մինչև ընտրվելս գյուղապետարանն անգամ շենք չուներ: Ինչ-որ վագոն-տնակ էր, կոտրված ապակիներով: Իսկ այսօր մեր գյուղը լույսերով է ողողված: Ախուրիկը գեղեցիկ է հատկապես գիշերը: Երկրաշարժից հետո նոր կառուցված թաղամասն արդեն 1 կմ երկարությամբ ջրագիծ ունի: Մեր տեղական ուժերով վերանորոգել ենք ոչ միայն ներհամայնքային, այլև միջհամայնքային ճանապարհները: Եվ ամենակարևորը՝ ընտանիքներով գյուղից մեկնելու միտում այլևս չեմ նկատում:

**- Ավանդական հարց կին-ղեկավարին. տանը գո՞հ են Ձեր նոր կարգավիճակից:**

- Ամուսինս վերաբերվում է ըմբռնումով, չի դժգոհում: Թեև ընտանեկան հոգսերն էլ ինձ համար միշտ առաջին պլանում են: Աշխատում եմ չթերանալ:

**- Ձեր կարծիքով՝ Հայաստանում կին քաղաքական գործիչների ինքնաբացահայտման հնարավորություն կա՞, թե՞ պակասում է կանանց նկատմամբ վստահությունը:**

- Կանայք ակտիվ չեն: Առայժմ մեր երկրում նրանց համար գործելու և մեծ քաղաքականություն մտնելու համապատասխան միջավայր չկա: Սակայն չեմ էլ կարծում, թե սեռն այստեղ վճռորոշ նշանակություն ունի: Եթե աշխատելու ցանկություն ունես, ամենամեծ խոչընդոտն էլ կարող ես հաղթահարել: Վստահ եմ՝ կինն ավելի լավ կարող է աշխատել, քան տղամարդը: Անկախ պաշտոնեական դիրքից:

**- Դուք Ձե՞զ նաև նկատի ունեք...**

- Մի՛ մտածեք, թե ինքնագովությամբ եք զբաղվում: Ես վաղուց եմ շահել համագյուղացիներիս վստահությունը: Ինձ հետ նույնիսկ ընտանեկան խնդիրներով են կիսվում:

**- Դա նշանակում է, որ նորի՞ց եք առաջադրվելու....**

- Իհարկե: Եթե գործը սկսել եմ, պիտի ավարտին հասցնեմ:

**Հարցազրույցը վարեց Սամվել Աղանյանը**

## Քարոզարշավ

# «Ո՛չ խտրականությանը»

**Այս քարոզարշավով են նշում Հայաստանում Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի 100-ամյակը «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկեր հասարակական կազմակերպությունները, քաղաքացիական կենտրոնները, Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցում ընդգրկված ակտիվիստները: «Ընդդեմ գենդերային խտրականության և ի նպաստ կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» նշանաբանով այս քարոզարշավը սկսվել է փետրվարի 8-ին և կշարունակվի մինչև մարտի 31-ը:**

Քարոզարշավի անկյունաքարն է «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքի փոփոխման դեմ նախաձեռնությունը, որի շրջանակներում Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցում դեռևս անցյալ տարվանից, երբ Ազգային ժողովն ընդունեց այդ փոփոխությունները, էլեկտրոնային ստորագրահավաք էր կազմակերպվել:

Հղի կանանց աջակցելու նպատակով համայնքային քաղաքացիական կենտրոնների ակտիվիստները նամակ-ուղերձ հղեցին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին և ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանին: Նրանք պահանջում էին վերանայել օրենքի մի շարք խնդրահարույց կետեր, որոնք, նրանց համոզմամբ, ոտնահարում են հղի կանանց իրավունքները: Նամակը տեղադրվեց նաև ցանցում, և շուրջ 1600 մարդ իր ստորագրությունը դրեց՝ պաշտպանելով այդ իրավունքները:

Թեպետ երկարատև պայքարից հետո կառավարությունը գնաց զիջումների և վերջերս վերանայեց օրենքը՝ կարծես թե վերականգնելով հղի կանանց իրավունքները, սակայն «ՕՔՍՖԱՄ»-ի քաղաքացիական կենտրոնների անդամները և մարդու իրավունքներով զբաղվող հասարակական այլ կազմակերպությունները բավարարված չեն դրանով: Նրանք համոզված են՝ անգամ փոփոխված օրինագծում քաղաքացիների իրավունքները ոտնահարվում են: Փաստաբան Հասմիկ Օհնիկյանը մեզ հետ զրույցում առանձնացնեց վերանայված օրինագծի առնվազն երեք խնդրահարույց կետ: «Ինչպես հիշում եք, ըստ կատարված փոփոխությունների, եթե ամսական աշխատավարձի եկամուտը գերազանցում էր նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկը, ապա նպաստը հաշվարկվելու էր նվազագույն աշխատավարձի հնգապատիկից: Թեև պայքարի արդյունքում փոփոխված օրինագծի տարբերակում այս նորմը չի կիրառվի հղիության և ծննդաբերության նպաստների դեպքում, սակայն մենք շարունակելու ենք պայքարել, որ այդ սահմանափակումը հանվի անաշխատունակության համար հատկացվող բոլոր նպաստների դեպքում, լինի կին թե տղամարդ, քանի որ այն անարդարացի է բարձր աշխատավարձ ստացողների համար: Չէ՞ որ նրանք կանոնավոր կերպով վճարում են բոլոր հարկերը»,- ասում է նա:

Բացի այդ, համաձայն օրենքի՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստը, բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի, աշխատանքային առաջին օրվա համար չի վճարվում, իսկ դրան հաջորդող երեք օրերի համար վճարում է գործատուն՝ առանց փոխհատուցման: «Դա, մեր կարծիքով, խնդիրներ կառաջացնի, որովհետև ակնհայտ է, որ գործատուների մեծ մասը, որոնք բազմաթիվ այլ հարցերում խախտում են աշխատողների իրավունքները, վերոնշյալ երեք օրվա համար ուղղակի չեն վճարի, աշխատողներն էլ, խուսափելով գործատուի հետ կոնֆլիկտի գնալուց, կլռեն»,- պարզաբանում է իրավաբանը: Եվ, վերջապես, մենք առաջարկում ենք, որ գոնե հղիության և ծննդաբերության նպաստների ժամանակ քաղաքացիները հարկ չմուծեն»,- ասում է Հասմիկ Օհնիկյանը:

Վերջերս «Ո՛չ խտրականությանը» քարոզարշավի շրջանակներում Շիրակի և Սյունիքի մարզերի քաղաքացիական կենտրոնների երիտասարդները խաղաղ քայլերթեր են անցկացրել՝ իրենց բողոքն արտահայտելով օրենքի այդ նախագծի կապակցությամբ:

«ՕՔՍՖԱՄ»-ի լրատվության և շահերի պաշտպանության պատասխանատու Քրիստինե Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ իրենց գործընկերների նախաձեռնած «Ո՛չ գենդերային խտրականությանը» քարոզարշավը բավականին լայն օրակարգ ունի և նրա շրջանակներում նախատեսվում են տարբեր միջոցառումներ՝ քայլերթեր հանուն հավասար հնարավորությունների Իջևանում, «Երեք սերնդի կանայք» ֆոտոցուցահանդես, կանանց բլոգների մրցույթ և այլ հետաքրքիր նախաձեռնություններ: Քարոզարշավի մասին նաև ֆիլմ է նկարահանվելու, հավելեց նա:

**Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը (ՔՀՀՑ), որը միավորում է «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկեր շուրջ 27 ՀԿ-ներ, կոչված է համակարգել և ուղղորդել այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք մտահոգ են Հայաստանում աղքատության հաղթահարման հիմնախնդրով և այլ հանրային կարևորություն ունեցող հարցերով:**

**Կայքի հասցեն է՝ www.cspn.am:**

## Բողոքի ալիք

### Ո՛չ հղիության նպաստների նվազեցմանը

*...«Այս օրենքը կբերի մեր երկրում ծնելիության կտրուկ անկմանը... Բոլոր հասարակարգերում էլ կարևորն ընտանիքն է, և փոխարենն ընդունվեն օրենքներ, որ խթանվի ծնելիությունը, մեր երկրում արվում է ճիշտ հակառակը»:*

*...«Պետությունը չի կարողանում կոռուպցիայի դեմ պայքարել, փոխարենը փորձում է դա անել իր քաղաքացիների իրավունքները խախտելով»:*

*...«Նվազեցնելով ժամանակավոր անաշխատունակության ժամանակ կանանց տրամադրվող փոխհատուցման չափը՝ օրենքն այդ կանանց դարձնում է սոցիալապես առավել խոցելի: Իսկ որքան սոցիալապես խոցելի է մայրը, այնքան մեծ է մայրական և մանկական հիվանդացության և մահացության դեպքերի հավանականությունը»:*

Սրանք ընդամենը մի քանիսն են այն հազարավոր մեկնաբանություններից, որոնք հղիության նաստների նվազեցման դեմ բողոքող կանայք և տղամարդիկ տեղադրել էին վերջին ամիսների ընթացքում Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի կայքում և այլ սոցիալական ցանցերում:

*Լուսանկարում՝ Կանանց բողոքի ցույցը ՀՀ կառավարության շենքի առջև, հոկտեմբեր 2010*

## Առցանց ստորագրահավաք

# «Խելք խելքի տանք կանանցով կանանց համար»

**Այս նշանաբանով է ընթացել Սիսիանի քաղաքացիական կենտրոնում դեռևս տարվա սկզբին տեղի ունեցած «Էլեկտրոնային հաղորդակցման միջոցները՝ որպես կանանց իրավունքների և շահերի պաշտպանության գործիք» հերթական սեմինար-քննարկումը:**

Քննարկման թեմային համահունչ մասնակիցները որոշեցին միանալ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցում սկսված էլեկտրոնային ստորագրահավաքին՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում փոփոխությունների դեմ, դրանով իսկ սատարելով երիտասարդ մայրերի սոցիալական իրավունքներին: Քննարկմանը մասնակցում էին Տորունիք, Ույծ, Իշխանասար և Սիսիան համայնքների ակտիվ խմբերը, բոլորն էր ժամանակին ստեղծվել են «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկեր՝ «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ ջանքերով «Համայնքի ձայնը որոշումների կայացման գործընթացում. կարողությունների և հանձնառությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

«Ծրագրի հիմնական առաքելությունն է, որ գյուղական համայնքների բնակիչները իրազեկ լինեն օրենքներին, բարձրացնեն իրենց իրավագիտակցությունը, պատկերացում կազմեն, թե ի՞նչ է նշանակում տեղական ինքնակառավարման մարմին, և ի՞նչ հարցերով կարող են դիմել ավագանուն»,- ասում է ծրագրի համակարգող Արթուր Պապոյանը:

Իսկ ծրագրի իրավաբան Հասմիկ Օհնիկյանն էլ փաստում է, որ գյուղերում ցածր իրավագիտակցության պարագայում թույլ են տրվում օրենքի բազմաթիվ խախտումներ: Հիմնական դժգոհությունները կապված են անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի, սոցիալական ապահովության պետական ծառայության, աշխատանքի պետական տեսչության հետ: Մեծ թիվ են կազմում նաև ընտանեկան նպաստների անհարկի դիմումների ու մերժումների մասին խախտումները:

Այնուամենայնիվ, ծրագրի փորձագետ Վերոնիկա Մելիքյանի գնահատմամբ՝ առաջընթացն ակնհայտ է: Բնակչությունն ակտիվացել է, նկատվում են քաղաքացիական հասարակության սաղմերը: Ամսական մի քանի անգամ Եղեգնաձոր, Վայք, Սիսիան, Կապան, Մեղրի քաղաքներում գործող քաղաքացիական կենտրոնների ներկայացուցիչները հանդիպում են բնակչության հետ, զրուցում, պարզում խնդիրներն ու իրավական խորհրդատվություն տրամադրում:

**Նյութերը պատրաստեց՝ Հասմիկ Հարությունյանը**

## Դիրքորոշում

### Ինովացիոն տեխնոլոգիաները՝ ի նպաստ կանանց իրավունքների

**«ՕՔՍՖԱՄ»-ը և նրա գործընկեր կազմակերպությունները հաճախ են ինովացիոն գաղափարներ և տեխնոլոգիաներ կիրառում իրենց գործունեության մեջ : Այսպես, գյուղական համայնքներում աղքատության հաղթահարման համար պատրաստ են աջակցելու ագրո- և էկոտուրիզմին կամ գյուղատնտեսական աշխատանքներ վարելու ժամանակակից հմտություններ ուսուցանել: Առողջ ապրելակերպի քարոզման և բժշկական ծառայությունների մասին բնակչության իրազեկության բարձրացման նպատակով հաջողությամբ SMS-հաղորդագրություններ են օգտագործում:**

Իսկ կանանց իրավունքների պաշտպանության գործում դիմում են ինտերնետ-տեխնոլոգիաների՝ կազմակերելով առցանց ստորագրահավաքներ, ինչպես, օրինակ՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում կատարված փոփոխությունների շուրջ կամ գենդերային խտրականության դեմ ուղերձի տարածման հարցում:

«Ո՛չ գենդերային խտրականությանը Հայաստանում» ուղերձը ցանցում հայտնվեց Շիրակի և Սյունիքի մարզերի մոտ երկու տասնյակ համայնքների բնակիչների նախաձեռնությամբ: Նրանք մտահոգություն հայտնեցին կանանց ներուժի ոչ լիարժեք դրսևորմամբ երկրի օրենսդիր, գործադիր մարմիններում, բիզնեսում, քաղաքականության մեջ:

«Մեր օրերում Հայաստանում կանայք լիարժեք ներկայացված չեն հանրային կյանքում, և նրանց կարողությունների դրսևորման համար իրական հավասար իրավունքներ և մեկնարկային պայմաններ չկան... Կանայք խոցելի են 21-րդ դարի մարտահրավերների առաջ, առավել խոցելի են գյուղական համայնքներում, որտեղ տղամարդկանց աշխատանքային միգրացիան ավելի է դժվարացնում նրանց սոցիալ-տնտեսական պայմանները: Գործազրկությունը, կանանց իրավունքների և շահերի ոտնահարումը չեն նպաստում երիտասարդ ընտանիքների կայացմանը»,- նշում են նախաձեռնության հեղինակները ՀՀ նախագահին և վարչապետին հասցեագրված նամակում:

## Ի դեպ

### Առաջնորդվե՛նք հավասարության սկզբունքով

Ցանցի անդամներն իրենց մտահոգությունը հայտնեցին նաև ՀՀ ընտրական օրենսգրքում զետեղված համամասնական ընտրացուցակներում կանանց ներկայացվածության վերաբերյալ: «Վերջերս ՀՀ ընտրական օրենսգրքում առաջարկվում է փոփոխություն կատարել, ըստ որի կանանց ներկայացվածությունը համամասնական ընտրացուցակներում հասցվում է 20%-ի՝ նախկին 15%-ի փոխարեն: Կարծում ենք՝ օրենքներում նման ձևակերպումները հակասում են ժողովրդավարության սկզբունքներին, այդ թվում՝ գենդերային հավասարությունը պահպանելու պետության որդեգրած ուղեգծին: Մեր կարծիքով՝ օրենքից պետք է հանվեն նշված տոկոսային սահմանափակումները՝ այն փոխարինելով «հավասար թվով» եզրույթով՝ դրանով իսկ համապատասխանեցնելով դրույթը ՀՀ Սահմանադրությանը և վերականգնելով գենդերային հավասարությունը: Չէ՞ որ հասարակական կյանքի որևէ ոլորտում երկու սեռերի միջև դրված նույնիսկ կես տոկոսի տարբերությունը տեսականորեն համարվում է գենդերային խտրականություն»,- այս առաջարկը զետեղված էր «Համայնքի ձայնը» բլոգներից մեկում:

## Կանանց ձայնը

**Մենք արդեն առիթ ենք ունեցել պատմելու «ՕՔՍՖԱՄ»-ի կողմից իրականացվող «Կանանց դերը և ձայնը կառավարման գործընթացում» ծրագրի և նրա շրջանակներում Սյունիքի և Տավուշի մի շարք համայնքներում ստեղծված կանանց և երիտասարդների շահերի պաշտպանության խմբերի մասին: Նաև նրանց ակտիվ գործունեության արդյունքում է այսօր այս մարզերի տարբեր համայնքներում ավելացել է ավագանիների կազմում ընտրված կին անդամների թիվը:**

**Տավուշի մարզում «ՕՔՍՖԱՄ»-ի այս ծրագրի հիմնական գործընկերն է «Հույսի կամուրջ» ՀԿ-ն, որը հայտնի է հանրապետությունում որպես հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ կանանց և հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի շահերը պաշտպանող կազմակերպություն:**

**Ի դեպ, կանանց շահերի պաշտպանության խմբերը շատ դեպքերում ստեղծվել են մարզում գործող երեխայի զարգացման կենտրոնների հենքի վրա, որոնք նույնպես «Հույսի կամուրջ» ՀԿ-ի և «ՕՔՍՖԱՄ»-ի համագործակցության արդյունք են:**

**«Այս ծրագրի շնորհիվ մեզ հաջողվեց համախմբել համայնքային որոշումների կայացման մակարդակում ներկայացված կանանց և օգտագործել նրանց հնարավորությունները մեր շահառուների՝ խոցելի կանանց և հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի խնդիրները պետական մարմիններում բարձրաձայնելու համար»,- ասում է «Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադևոսյանը:**

# «Փոփոխությունը սկսվում է քեզանից»

**«ՕՔՍՖԱՄ»-ի հայտնի կարգախոսի շուրջ են միավորվում այս կանանց պատմությունները**

### Վարդուհի. «Հասկացա, որ մենակ չեմ»

Ես Վարդուհին եմ: Ընտանիքիս հետ ապրում եմ Խաչքառակ գյուղում: Մինչև 3 տարեկանը որդիս՝ Աշոտը, աշխույժ երեխա էր, բայց հետո ի հայտ եկան խնդիրներ. դժվարանում էր քայլել, տարանք Դիլիջան, վիրահատեցինք, բայց փոփոխություն չեղավ: Որքան մեծանում էր, այնքան վիճակն ավելի էր բարդանում: Թե՛ երեխայի և թե՛ ընտանիքի բոլոր անդամների համար դա մեծ սթրես էր, բայց այստեղ է, որ «Հույսի կամուրջը» ձեռք մեկնեց մեզ:

Մինչև երեխայի զարգացման կենտրոն հաճախելը ինձ զգում էի մեկուսացված, կարծես այս հիվանդությունը, պրոբլեմը միայն իմն էր, մենակ ես էի ու իմ խնդիրը, ոչ մի հույս չկար: Բայց հաճախելով կենտրոն, շփվելով երեխաների, ծնողների հետ՝ հասկացա, որ մենակ չեմ… «Հույսի կամուրջն» ինձ մեծ ուժ է տալիս, օգնում խնդրին այլ աչքերով նայել:

Իսկ Աշոտը դպրոցում շատ լավ է սովորում, ամենաշատը մաթեմատիկա և անգլերեն առարկաներն է սիրում: Այս տարի մասնակցել է նաև ՀՀ-ի բոչիայի առաջնությանը և 2-րդ տեղը զբաղեցրել»:

### Աստղիկ. «Ինձ այնտեղ օգնեցին հավատալ իմ ուժերին»

Ես Աստղիկն եմ՝ Աչաջուր համայնքից: Երբ 2009-ին ինձ խորհուրդ տվեցին աղջկաս խնդիրներով դիմել «Հույսի կամուրջին», ես, անկեղծ ասած, չէի էլ հավատում, որ ինձ այնտեղ կարող են օգնել, բայց որոշեցի հանդիպել: Իրականում ինձ այնտեղ օգնեցին ոչ միայն երեխայիս հատուկ սննդի հարցը փոքր-ինչ լուծել, ամենակարևորը՝ ես ավելի ինքնավստահ դարձա, սկսեցի հավատալ իմ ուժերին և ավելի ակտիվ դարձա: Իմ այսօրվա աշխատանքն էլ «Հույսի կամուրջի» ծրագրերից մեկի արդյունքում ստացվեց. երբ բացվեց Աչաջուրի երաժշտական դպրոցը, համայնքապետն ինձ առաջարկեց աշխատել որպես դպրոցի տնօրեն: Վստահ եմ, որ եթե կապ չհաստատեի «Հույսի կամուրջի» հետ, ես այսօր ընդամենը խնամակալ մայր կլինեի…

### Լուսինե. «Հնարավորություն ունեմ օգնելու մարդկանց»

Ես Լուսինեն եմ, ապրում եմ Դիլիջանում: Ինչպես բոլոր աղջիկները, ես նույնպես սովորել ու ավարտել են միջնակարգ դպրոցը, ուսումս շարունակել ԵՊՀ բնագիտական ֆակուլտետում: Այն ավարտելուց հետո, ինչպես շատերը, ես էլ աշխատանք չգտա ու պետք է որ համակերպվեի այդ կարգավիճակին, բայց որոշեցի շատ փնտրել:

Երկար փնտրտուքներից հետո այցելեցի «Հույսի կամուրջի» Դիլիջանի մասնաճյուղ, և երբ այնտեղ ասացին, որ կարող եմ աշխատել կամավորական հիմունքներով, ուրախացա, որ գոնե այդպես հնարավորություն կունենամ կարողություններս ու գիտելիքներս մարդկանց ի սպաս դնել: Որոշ ժամանակ անց մասնակցեցի «ՕՔՍՖԱՄ»-ի ծրագրի շրջանակներում կազմակերպվող համակարգչային դասընթացների: Այն տևեց 3 ամիս, որից հետո «Հույսի կամուրջի» մասնաճյուղի տնօրեն Սուսաննա Մատինյանն առաջարկեց փոխարինել կենտրոնի աշխատակցին, որն անցել էր երեխայի խնամքի արձակուրդին:

Հիմա աշխատում եմ որպես համակարգչային օպերատոր, ինչպես նաև ուսուցանում եմ գյուղական համայնքների ակտիվ կանանց ու մայրերին նույն դասընթացը, որին մասնակցել եմ ես: Այժմ նրանք հնարավորություն ունեն շփվելու միմյանց հետ ինտերնետ կապի միջոցով: Ես կարծում եմ, որ իմ երազանքն իրականացել է, ես հնարավորություն եմ ստացել օգնելու մարդկանց:

## Օգնության ձեռքը

### Առողջությունը պահպանող SMS-ներ

**Համաձայնեք՝ հաճելի է, երբ ինչ-որ մեկը հոգ է տանում ձեր առողջության մասին ու ձեզ է ուղարկում SMS հաղորդագրություն՝ հայտնելով, թե որտե՞ղ կարելի է բժշկական օգնություն ստանալ և պե՞տք է արդյոք դրա համար վճարել: Ով գիտի՝ գուցե անհրաժեշտ պահին ուղարկված այս SMS-ները կարող են նույնիսկ ինչ-որ մեկի կյանք փրկել:**

«Ես շատ հուզված եմ ինձ եկած SMS-ներով, քանի որ մեզանում ընդունված չէ մարդկանց իրազեկելու իրենց իրավունքների մասին, և մենք քիչ բան գիտենք օրենքով նախատեսված բժշկական ծառայությունների վերաբերյալ և հաճախ պարզապես տեղյակ չենք՝ ո՛ւր դիմել այս կամ այն առողջական խնդրի դեպքում: Օրինակ՝ որդուս վիրահատեցին անցյալ տարի, ասացին, թե պետք է հավելյալ վճարել, իսկ իմ մտքով իսկ չէր անցնում, որ պետք չէր վճարել: Ա՛յ եթե այն ժամանակ նման SMS ստանայի, հաստատ կիմանայի՝ ո՛ւմ դիմել»,- պատմում է Զառիթափ գյուղի բնակչուհի Սոֆյա Ավագյանը: Նա բժշկական ծառայությունների մասին գյուղական շրջանների բնակիչների իրազեկության բարձրացման SMS-արշավի հասցեատերերից մեկն է:

Այս արշավը «Հայաստանի սահմանամերձ մարզերում համայնքային առողջության առաջնային պահպանման» «ՕՔՍՖԱՄ» ՄԲ-ի ծրագրի մի փոքր մասն է միայն: Ծրագիրը 1995-ից իրականացվում է հանրապետության հինգ մարզերի 140 սահմանամերձ համայնքներում: Նրա շրջանակներում ստեղծված Առողջության պահպանման հիմնադրամների միջոցով դեղամիջոցներն ու հիվանդանոցային բուժումը մատչելի են նաև համայնքների անապահով բնակիչներին: Միայն վերջին երկու՝ 2009-2010 թթ. հեռավոր սահմանամերձ գյուղերում առաջնային բուժօգնության կետերի կազմակերպման և հագեցման, բուժքույրերի պատրաստման և անվճար բժշկական խորհրդատվության համար կազմակերպությունը ներդրել է 40 մլն դրամ:

«ՕՔՍՖԱՄ»-ի այս ծրագրի հիմնական գործընկերն է «Ապավեն համայնքներին» հասարակական կազմակերպությունը: «15 տարվա ընթացքում գլխավորը, ինչին մենք հասել ենք, այն է, որ հեռավոր շրջաններում փոխվել է բնակչության վերաբերմունքը սեփական առողջության հանդեպ»,- ասում է «Ապավեն համայնքներին» ՀԿ ղեկավար Կարեն Առաքելյանը:

## Լավատեսության մեխանիկա

# Վաղն ավելի լավ կլինի, քան այսօր…

**Նման լավատեսությամբ են համակված «ՕՔՍՖԱՄ»-ի «Հայաստանի գյուղական համայնքների կայուն կենսապահովում» ծրագրի բոլոր շահառուները՝ Տավուշի և Վայոց ձորի մարզերի 9 սահմանամերձ, բարձրադիր և հեռավոր գյուղական համայնքները: Ծրագիրն օգնում է համայնքներին արդյունավետ օգտագործելու իրենց գյուղատնտեսական ռեսուրսները և ապահովել կայուն եկամուտ, օժանդակում է շահավետ նախաձեռնություններին: Ծրագրի շրջանակներում ստեղծվել են վեց գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնցից չորսը՝ սառնարանային տնտեսությունների կառավարման նպատակով:**

Վայոց ձորի մարզի Զառիթափ և Հերհեր գյուղերի բնակիչների ապրուստի հիմնական միջոցը այգեգործությունն է: Գյուղացիներից շատերը սակայն չէին կարողանում սպառել իրենց ստացած ամբողջ բերքը, քանի որ սառնարանների բացակայության պատճառով այն որոշ ժամանակ անց փչանում էր: Սակայն այս խնդիրն արդեն անցյալում է:

Անցյալ տարվա հոկտեմբերին Զառիթափ գյուղում կայացավ թարմ պտուղբանջարեղենի մթերման կենտրոնի բացման արարողությունը: Այդ օրը Զառիթափում կրկնակի տոն էր. գյուղացիները նշում էին բերքի տոնը և մթերման կենտրոնի բացումը, որը նրանք մեծ սառնարան էին անվանում: Մթերման կենտրոնը 140 խմ տարողությամբ խցիկ է՝ համալրված սառնարանային սարքավորումներով: Այն կարող է ապահովել ավելի քան 40 տ գյուղատնտեսական ապրանքների սառը պահեստավորումը:

Զառիթափ գյուղում 400 տնտեսություն կա, բնակիչները պատմում էին, որ նախկինում իրենք ստիպված էին շուկայականից ցածր գնով վաճառել իրենց բերքը, որպեսզի արագ սպառվի և չհասցնի փչանալ. «Շատ է եղել, որ թափել ենք, սառնարանի բացակայության պատճառով մրգի տեսքը փչանում էր, չէին առնում»,- ասում է Նունե Աբրահամյանը: Մինչդեռ սառնարանից օգտվելու հնարավորության դեպքում գյուղացիները կկարողանան ավելի մեծ շահույթ ստանալ այգեգործությունից. «Սիմիրենկո» տեսակի խնձորը կարող ենք մինչև մայիս պահել սառնարանում, շուկայում պահանջարկ լինելու դեպքում կարող եմ իրացնել»,- ասում է Անժիկ Մարգարյանը:

Հերհեր գյուղի բնակիչ Սոֆի Ավագյանը պատմեց, որ նրանք մոտ 50 ծիրանենի են մշակում, որից ստացված բերքը փչանալուց փրկելու համար միշտ ցածր գնով են վաճառել. «Իսկ հիմա սառնարան կա, կպահենք և թանկ կվաճառենք»,- ասաց Սոֆին:

«Զառիթափ» սառնարանային տնտեսության տնօրինման և կառավարման կոոպերատիվի նախագահ Շմավոն Ազատյանն էլ հավելեց, որ գյուղացիները սառնարանից օգտվելու համար պետք է վճարեն միայն էլեկտրաէներգիայի վարձը՝ մեկ կիլոգրամի համար ամսական մինչև 10 դրամ:

Մթերման կենտրոնը ստեղծվել է «ՕՔՍՖԱՄ»-ի և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի «Զրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում:

*Զառիթափի սառնարանային տնտեսությունում:*

«ՕՔՍՖԱՄ»-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար Մարգարիտա Հակոբյանն իր ելույթում նշեց, որ այս սառնարանի կառուցումը գյուղական համայնքների կենսապահովման իրենց հնգամյա ծրագրի մի բաղադրիչն է միայն: 2010-15 թթ. այս ծրագրի շրջանակներում աջակցություն կստանան Տավուշի և Վայոց ձորի մարզերի 40 հեռավոր համայնքների 4 հազար փոքր ֆերմերներ:

Իսկ «Հազարամյակի մարտահրավեր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանն իր խոսքում կարևորեց այն, որ ծրագրի միջոցով ֆերմերները կկարողանան խոշոր և կայուն եկամուտ ստանալ:

Նշենք, որ մինչ այդ ևս մեկ մթերման կենտրոն էր շահագործման հանձնվել Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքում, որը սպասարկելու է նաև Լուսաձոր, Խաչքառակ և Լուսահովիտ համայնքների տնտեսությունները: «Սա մեր համայնքների համար մեծ առաջընթաց է, որն ապագայի նկատմամբ ավելի մեծ հույսեր է ներշնչում»,- ասում է ծրագրի շահառու Հրաչ Սարգսյանը:

**Արման Ղարիբյան**

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ ՄԲ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ

Oxfam

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի

Տպաքանակը՝ 3000